

Արձանագրություն թիվ 5

*ԵՊՀ-ի քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,
կայացած 2017թ նոյեմբերի 29-ին*

Օրակարգ

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:
2. Պետական քննությունների հարցաշարերի քննարկում և հաստատում:
3. Ամբիոնների վարիչների հաղորդումը կուրսային աշխատանքների ընթացքի վերաբերյալ:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ՝ պրոֆեսոր Տ.Վ. Ղուչիկյանը ներկայացրեց հերթական գիտխորհրդի օրակարգը:

1. Պրոֆեսոր Տ.Վ. Ղուչիկյան

-Օրակարգի առաջին հարցը՝ ավարտական և մագիստրոսական թեզերի վերնագրերի հաստատումն է : Ամբիոնի վարիչները ներկայացրել են Իրենց ամբիոններում ավարտական աշխատանքներ կատարող ուսանողների տվյալները, թեմաների վերնագրերը և ղեկավարները: Օրգանական և ֆիզ-կոլ քիմիայի ամբիոններում ավարտական աշխատանք կատարում են ութական ուսանող, անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնում՝ 7 ուսանող է: Ավարտական աշխատանքների վերնագրերը քննարկվել և հաստատվել են ամբիոնի նիստում: Եթե վերնագրերում փոփոխության հարց լինի պետք է տեղեկացնել, որպեսզի սխալմունք չլինի: Մագիստրոսական թեզերի վերնագրերը ներկայացրել են “անօրգանական և անալիտիկ ” և “Ֆիզիկական և կոլ. ” քիմիայի ամբիոնները:

Որոշեցին- ֆակուլտետի խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն հաստատեց ամբիոններից ներկայացված ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերը:

2.Նիստի նախագահ, պրոֆ. Տ.Վ. Ղուչիկյան – Կարևոր խնդիր է պետական քննությունների հարցաշարերը: Ամբիոնները ներկայացրել են քննության

հարցաշարերը, որոնք քննարկված են ամբիոնների նիստերում: Հարցաշարերի հետ համաձայն է՞ ք:

Որոշեցին- Բաց քվերկությամբ հաստատել պետական քննության հարցաշարերը:

Տ.Վ.Ղուչիկյան - Մենք կարող ենք արդենիսկ հարցաշարերի էլեկտրոնային տարբերակը տալ ավարտական կուրսի ուսանողներին:

3. Նիստի նախագահ՝ Տ.Վ. Ղուչիկյան - Հաջորդ հարցը վերաբերվում է ամբիոններում իրականացվող կուրսային աշխատանքներին:

Ելույթ ունեցան ամբիոնի վարիչները. Նրանք նշեցին ,որ այժմ ամբիոններում իրականացվում է ավարտական կուրսի կուրսային աշխատանքները: Նշված կուրսի ուսանողների համար կուրսային աշխատանքները հանդիսանում են ավարտական աշխատանքի գրական ակնարկ: Հետևաբար մեծ ուշադրություն է դարձվում վերջիններս ձևակերպման վրա: Այնուհետև իրականացվելու է կուրսային աշխատանքների ցուցադրական պաշտպանություն: Կուրսային աշխատանքների նմանատիպ պաշտպանությունը ուսանողին տալիս է փորձառություն լսարանի առաջ ելույթի համար և միարժամանակ թերությունների ֆիքսում և շտկում:

4. Օրակարգում ունենք մի քանի ընթացիկ հարցեր

Ա) Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդներդների ատեստավորման հարցը:

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի 4-րդ տարվա հայցորդ Ջառա Լեոնիկի Գրիգորյանի ատեստավորման հարցը:

Տ.Վ.Ղուչիկյանը նշեց, որ հարցը քննարկվել է ամբիոնում, և հաշվի առնելով հայցորդի կատարած աշխատանքները ամբիոնը երաշխավորել է ատեստավորման:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրել է դիմերթիլսուլֆոքսիդի և դիէթիլսուլֆոքսիդի հետ նիտրիլ խումբ պարունակող ցածրամոլեկուլային միացությունների լուծույթները խտաչափության և մածուցիկաչափության մեթոդներով:

Կատարված աշխատանքների հիման վրա տպագրվել է մեկ գիտական հոդված առանց համահեղինակի և մեկ գիտաժողովի թեզիս: Երկու գիտական հոդված տպագրության փուլում են:

Որոշեցին – Հաշվի առնելով ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի կարծիքը՝ ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց ատեստավորել հայցորդ Ջ.Լ.Գրիգորյանին:

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի 1-ին տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Մարիետա Կարենի Ջաքարյանի ատեստավորման հարցը:

Քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյանը նշեց, որ հարցը քննարկվել է ամբիոնում, և հաշվի առնելով հեռակա ուսուցմամբ ասպիրանտի կատարած աշխատանքները ամբիոնը երաշխավորել է ատեստավորման:

Հաշվետու ժամանակահատվածում հանձնել է որոշ ընդհանուր և մասնագիտական դասընթացներ, որոնցից համապատասխանաբար հավաքել է 19 և 9 կրեդիտ:

Կատարված աշխատանքների հիման վրա տպագրվել է մեկ գիտական հոդված և մեկ թեզիս:

Որոշեցին – Հաշվի առնելով անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի կարծիքը՝ ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց ատեստավորել հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Մ. Կ. Ջաքարյանին:

Բ) Տ.Վ.Ղուչիկյան – Նախորդ նիստերից մեկում լսել էինք Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի դոցենտ, քիմիական գիտությունների թեկնածու Ռոբերտ Խաչիկի Ադամյանի “Անօրգանական քիմիա 2-հատորով” դասագրքի “Ոչանցումային տարրերի քիմիա” 1-ին հատորի տպագրության հարցը: Ռ.Խ.Ադամյանի ներկայացրած աշխատանքը ենթարկվել է ինչպես ներամբիոնային, այնպես էլ արտաքին գրախոսման: Երկրորդ փուլի գրախոսները (Հ.Թումանյանի անվան Վանաձորի պետական համալսարանի՝ քիմիայի ամբիոնի վարիչ, ք.գ.դ., պրոֆեսոր Հ.Ա. Ղազարյանը և Հայաստանի ազգային ազրարային համալսարանից՝ քիմիայի ամբիոնի վարիչ, ք.գ.դ., պրոֆեսոր Օ.Ա.Քամալյանը) նշել են աշխատանքի անհրաժեշտությունը ուսանողների, ասպիրանտների, ուսուցիչների, դասախոսների և ընդհանրապես անօրգանական քիմիայով զբաղվողների համար: Գրախոսներ ք.գ.դ., պրոֆեսորներ Հ.Ա.Ղազարյանը և Օ.Ա.Քամալյանը դասագիրքը երաշխավորել են տպագրության:

Որոշեցին - Հաշվի առնելով Ռ. Խ. Ադամյանի “Անօրգանական քիմիա 2- հատորով” դասագրքի “Ոչանցումային տարրերի քիմիա” 1-ին հատորի անհրաժեշտությունը ուսումնական գործընթացի համար՝ քիմիայի ֆակուլտետի գիտխորհուրդը որոշեց երաշխավորել տպագրության և դիմել ՀՀ ԿԳ նախարարությանը՝ թույլատրելու տպագրել վերոհիշյալ աշխատանքը, որպես դասագիրք:

Գ) Գիտեք այս ժամանակահատվածը հանդիսանում է նաև բազային գիտահետազոտական և թեմատիկ ֆինանսավորմամբ լաբորատորիաների հաշվետվության շրջան: Հաշվետվությունները ներկայացրել է Ֆիզ.կոլ.քիմիայի ամբիոնի վարիչ պրոֆ. Շ.Ա.Մարքարյանը

1. “Սուլֆոնների լուծույթների փորձարարական և տեսական ուսումնասիրությունները” վերնագրով թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացվող աշխատանքը այս տարի ավարտվում է: Հաշվետվությունը տրված է:

Որոշեցին - հաստատել ներկայացված թեմատիկ ֆինանսավորմամբ ծրագրի հաշվետվությունը:

2. Ներկայացվել է նաև “Ֆիզիկական քիմիայի Գ/Հ լաբորատորիայի հաշվետվությունը: Հաշվետու տարում հրատարակվել է 15 գիտական աշխատանք, որից 9 հոդված և 6 թեզիս:

Որոշեցին - հաստատել ներկայացված Գ/Հ լաբորատորիայի հաշվետվությունը և խորհուրդը երաշխավորում է Ֆիզիկական քիմիայի Գ/Հ բազային լաբորատորիայի հետագա ֆինանսավորումը

Ֆակուլտետի գիտական

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Տ.Վ.Ղոչիկյան

Գիտ.խորհրդի

քարտուղար, դոցենտ

Մ.Ա.Սամվելյան